

Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ԶՈՐԻ ՄԱՐԶԻ «ԵՂԵԳՆԱԶՈՐԻ ԱՏԱՄՆԱՊՐՈՊԵՁԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԻԱՅՍՄԱՆ ԶԵՎՈՎ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 23-Ի N 881-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դեկավարժելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 63-րդ հոդվածի, 64-րդ հոդվածի 2-րդ մասի և «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ ու 20-րդ հոդվածների և 67-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետի պահանջներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո յ ո շ ո մ է.

1. «Եղեգնաձորի ատամասպրոյեցարան» պետական փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպել՝ միացնելով «Եղեգնաձորի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը:

2. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում՝

1) ապահովել «Եղեգնաձորի ատամասպրոյեցարան» պետական փակ բաժնետիրական ընկերության և «Եղեգնաձորի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության միացման պայմանագրի և փոխանցման ակտի կազմման ու հաստատման աշխատանքների կատարումը.

2) կատարվող փոփոխությունները և գույքի հանձնման-ընդունման աշխատանքներն իրականացնել «Եղեգնաձորի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության միջոցների հաշվին, դրան համապատասխան հաստատել «Եղեգնաձորի բժշկական կենտրոն» փակ

բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալի չափը և «Եղեգնաձորի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության մեջ կատարել համապատասխան փոփոխություններ ու լրացնումներ.

3) ապահովել «Եղեգնաձորի առամսապրոդեզարան» պետական փակ բաժնետիրական ընկերության գործունեության դադարեցման պետական գրանցումը՝ «Եղեգնաձորի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության միջոցների հաշվին:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունիսի 23-ի «50 տոկոս և ավելի պետական մասնակցությամբ ընկերությունների ցանկին և Հայաստանի Հանրապետության կորպորատիվ կառավարման կանոնագրքի ընդունման ժամանակացույցին հավանություն տալու մասին» N 881-Ն որոշման հավելվածի 322-րդ կետը: